«ԱՔՌԱ ՔՐԵԴԻՏ ՌԵՓՈՐԹԻՆԳ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ACRA credit bureau

| | |
|---|---|
| Կազմված է «30» հունիսի 2022թ.,<br>բաղկացած է 2 թերթից<br><br>ՀԱՍՏԱՏՎԱԾ Է<br><br>«ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ»<br>փակ բաժնետիրական ընկերության<br>Բաժնետերերի ընդհանուր ժողովում<br><br>«30» հունիսի 2022թ.<br><br>Արձանագրություն թիվ 30/06 | Տպագրված է ընդամենը 3 օրինակ<br>ՕՐԻՆԱԿ 1<br><br>ԳՐԱՆՑՎԱԾ Է<br><br>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ<br>ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ<br>ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 12.04.2006թ.<br>գրանցման թիվ՝ 286.120.06038<br>վկայական՝ 03Ա 071442<br>ՀՎՀՀ՝ 00083051<br><br>29.12.2017թ. գրանցված կանոնադրության թիվ<br>_______ փոփոխությունը գրանցված է<br>իրավաբանական անձանց պետական<br>ռեգիստրի կողմից<br><br>«__» ____20__թ. |
| Գործադիր տնօրեն՝<br>Ա. Գաբրիելյան<br><br>_________________ | աշխատակից՝<br><br>_________________ |

«ԱՔՌԱ ՔՐԵԴԻՏ ՌԵՓՈՐԹԻՆԳ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն) լրացնել նոր *9.2.16.1 կետով* շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

«9.2.16.1. Ընկերության վերստուգող հանձնաժողովի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկությունների նախապատրաստումը:

Սույն կետով նախատեսված վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը Տնօրենների խորհրդի կողմից իրականացվում է տարեկան կտրվածքով՝ հաշվի առնելով Ընկերությունում տարեկան վերստուգման աշխատանքների ծավալը, առաջարկություններում առնվազն նշելով վճարման չափի կա՛մ միջակայքը կա՛մ հաստատուն թիվը, ինչպես նաև՝ վճարման ժամկետը:»:

2. Կանոնադրության *11.3.1-11.3.5-րդ կետերը* փոխարինել *11.3.1-11.3.7 կետերով* շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

« 11.3.1 հսկողություն է սահմանում Ընկերության հաշվապահական հաշվառման և հաշվետվության վարման նկատմամբ,

11.3.2 հսկողություն է սահմանում Ընկերությունում տեղեկատվական անվտանգության արտաքին աուդիտի ներգրավման և աշխատանքների կազմակերպման նկատմամբ,

11.3.3 Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովին հաշվետվություն է ներկայացնում Օրենսդրությանը Ընկերության գործունեության համապատասխանության մասին,

11.3.4 եզրակացություններ է տալիս Ընկերության Տնօրենների խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ,

11.3.5 իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների ստուգում,

11.3.6 իրականացնում է Ընկերությունում տեղեկատվական անվտանգության ռիսկերի և ներքին հսկողության մեխանիզմների արդյունավետության ստուգում,

11.3.7 իրականացնում է Օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ: »:

12